ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Փետրվարի 4-ին, շաբաթ.— Սրբոց որդւոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի։**

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ ճավուր պատշաճի քարոզ խոսեց։

* * *

**Փետրվարի 5-ին, կիրակի.—** Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն։

* * *

**Փետրվարի 11-ին, շաբաթ.—Սրբոցն Սարգսի զորավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և չորեքտասան զինուորացն։**

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ ճավուր պատշաճի քարոզ խոսեց։

* * *

**Փետրվարի 12-ին, կիրակի.—** Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն։

* * *

**Փետրվարի 14-ին, երեքշաբթի.— ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ։ Տօն քառասնօրեա գալստեանն Քրիստոսի ի տաճարն։**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ ճավուր պատշաճի քարոզ խոսեց։

* * *

**Փետրվարի 19-ին, կիրակի.**— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Անթիլիասի միաբան Տ. Գրիգոր աբղ. Չիփթճյանը: «Հայր մեր»ից առաջ հոգեշունչ քարոզ խոսեց նույնպես ուխտավորաբար Մայր Աթոռում գտնըվող Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին երկրորդը:

* * *

**Փետրվարի 21-ին, երեքշաբթի.—Սրբոց Ղևոնդեանց քահանայիցն:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

* * *

**Փետրվարի 23-ին, հինգշաբթի.—Սրբոց Վարդանանց զորավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը: «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ վասն նահատակների նշեցելոց ազգիս հայոց:

* * *

**Փետրվարի 25-ին, շաբաթ.—Կոստանդնուպոլսոյ Ս. ժողովոյն հարիւր յիսուն Հայրապետացն (381 թ.):**

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ համապատասխան քարոզ խոսեց:

* * *

**Փետրվարի 26-ին, կիրակի.— Բուն Բարեկենդան:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը:

Ս. պատարագին ներկա էր Կաթողիկոսական Տեղապահ Նորին Սրբազնապատվություն Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

* * *

**Մարտի 4-ին, շաբաթ.—Սրբոյն Թէոդորոսի զորավարին:**

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վարուժան սրկ. Տերտերյանը:

*
* *

**Մարտի 5-ին, կիրակի—Բ. կիր. Քառասնորդական պահոց (Արտաքսման):**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը (Տես էջ 9):

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Կաթողիկոսական Տեղապահ Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

*
* *

**Մարտի 11-ին, շաբաթ.— Սրբոցն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետին, և միւս Կիւրղի եպիսկոպոսին, և մորն նորա Աննայի:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Գեղամ սրկ. Տիգրանյանը:

*
* *

**Մարտի 12-ին, կիրակի.— Գ. կիր. Քառասնորդական պահոց (Անառակին):**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը (Տես էջ 13):

*
* *

**Մարտի 18-ին, շաբաթ.— Սրբոցն Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին, և հայրապետին մերոյ Յովհաննու Օձնեցւոյն, և վարդապետացն մերոց՝ Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն:**

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Վազգեն սրկ. Գալըստյանը:

*
* *

**Մարտի 19-ին, կիրակի.— Դ. կիր. Քառասնորդական պահոց (Տնտեսին):**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը:

Ս. պատարագին ներկա էր Կաթողիկոսական Տեղապահ Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

*
* *

**Մարտի 25-ին, շաբաթ.— Սրբոց Մանկանցն քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Գրիգոր սրկ. Ուզունյանը:

* * *

**Մարտի 26-ին, կիրակի.—Ե. կիր. Քառասնորդական պահոց (Դատաւորին):**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Կաթողիկոսական Տեղապահ Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

